ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ ԵՎ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԴԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՄ ՄՂՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1939—1945 թթ.)

Ջ. Մ. ՂԱՍԱՐՅԱՆ

Ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի, պատմության էջերում բազում պատերազմների ու ճակատամարտերի տարեթվեր են նշված։ 1945 թ. մայիսի 9-ը նշված է որպես ամենածանր և ամենադաժան պատերազմի ավարտի տարեթիվ։ Այդ պատերազմը նշանավորվեց դաշնակից երկրների՝ ԱՍՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և առաջին հերթին Խորհրդային Միության ժողովուրդների հերոսական մարտերով ու հաղթանակով։

Ռուս, ուկրաինացի, բելոռուս, մեծ և փոքր այլ ազգերի կողքին, այդ հաղթանակում իր արժանի լուման ներդրեց հայ ժողովուրդը՝ բազում զոհերով ու հերոսներով։

Ավելի քան 500 հազար հայորդիներ մասնակցեցին Երկրորդ աշխարհամարտին։ 20 հազար հայեր մարտնչում էին ԱՄՆ-ի բանակներում, 12 հազարը՝ հիտլերյան հորդաների դեմ, ֆրանսիական բանակի շարքերում և դիմադրական պայքարում, 1200-ը՝ հունական բանակում, ընդդեմ հիտլերյան և մուսոլինյան զավթիչների։ Հայերը Իրանում և Մերձավոր արևելքում նյութական շոշափելի օգնություն ցույց տվեցին դաշնակից երկրներին, մասնավորապես ԽՍՀ Միությանը, ստեղծեցին «Սասունցի Դավիթ», «Վարդան Մամիկոնյան», «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները։ Նրանք նյութական այլ միջոցներ և ռազմամթերք էին մատակարարում խորհրդային բանակին։

1000-ից ավել բուլղարահայեր գործուն մասնակցություն ցուցաբերեցին բուլղարական հակաֆաշիստական պայքարում և Հայրենական պատերազմում Հարավսլավիայի, Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում՝ մարշալ Տոլբուխինի ու գեներալ Ստոյչևի հրամանատարության ներքո երրորդ Ուկրաինական ռազմաճակատում։ Հազարավոր բուլղարահայեր նյութապես և բարոյապես օժանդակում էին բազմաթիվ հայ գերիներին և վիրավորներին։

Անջնջելի տառերով են գրված եվրոպական հակաֆաշիստական, դիմադրական շարժման պատմության էջերում Միսաք Մանուշյանի, Վահրամ Սահակյանի (Ֆրանսիա), Անդրանիկ Ղուկասյանի (Հունաստան), Հերմինե Ռաղդրաղլյանի (Սաշկա), Կարապետ Խաչատրյանի, Հարություն Պողոսյանի, Հակոբ Պարոնյանի անունները (Բուլղարիա)։

Երկրորդ աշխարհամարտի նախօրեին եվրոպական ցամաքամասում հանգրվանել էին ավելի քան 200 հազար հայ տարագիրներ, որոնք վերապրել էին 1915 թ. Մեծ եղեռնը Թուրքիայում։ Հալածված ու քեմալական սվիններից մազապուրծ եղած 50 հազարից ավելի տարագիրներ ապաստանել էին բուլղար եղբայրական ժողովրդի հողի վրա։ Ունեցվածքից և նյութական միջոցներից զրկված տարագիր հայերը, Եվրոպայում հանգրվանելով, ապրում էին տվյալ երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ելևէջների պայմաններում։

Ֆրանսիայում, Հունաստանում, Ռումինիայում, Բուլղարիայում և այլուր հայ տարագիրները, աշխատավորական զանգվածների շարքերում գործուն մասնակցություն էին ցուցաբերում սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման պայքարում։ Նրանք անտարբեր չմնացին նաև քաղաքական հարցերում, հատկապես պատերազմը հրահրողների և նրանց համակիրների դեմ տարվող պայքարում։ Վերապրելով Առաջին աշխարհամարտի արհավիրքները՝ նրանք խաղաղ պայմաններում Մայր Հայրենիք վերադառնալու հույսեր

էին փայփայում։ Երբ պայթեց Երկրորդ համաշխարհային պատերազմը (1939 թ. սեպտեմբերի 1-ին), և 1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա, հայկական սփյուռքի եվրոպական հատվածը իր ամբողջությամբ կանգնեց հակաֆաշիստական դիմադրական պայքարի կողքին՝ մասնակցելով հակահիտլերյան դիմադրական շարժման բոլոր ձևերին։ Նրանք քաջ գիտակցում էին, որ այդ պայքարը ամենանվիրական գործն է Մայր Հայրենիքի պաշտպանության և գոյատևման համար։

1924—1939 թթ. Բուլղարիայի Սոֆիա, Պլովդիվ, Ռուսե, Վառնա, Բուրգաս, Յամբոլ, Սլիվեն և այլ քաղաքների գործարաններում և ֆաբրիկաներում բազմաթիվ հայ բանվոր-բանվորուհիներ ընդգրկվել էին ինչպես հայ հասարակական ու քաղաքական կազմակերպությունների, այնպես էլ զանազան արհեստակցական միությունների և բանվորական կուսակցությունների շարքերը։ Տվյալ ժամանակաշրջանում բուլղարահայ համայնքը հայապահպան վառ օջախներից մեկն էր իր բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններով, դպրոց-վարժարաններով, ակումբներով ու գրադարաններով։ Համայնքն ուներ իր ներքին ղեկավարման մարմինները (թեմական և թաղական խորհուրդներ, առաջնորդարան՝ թեմի առաջնորդով, դպրոցական հոգաբարձություններ)։ Սակայն երկրի քաղաքական յուրահատուկ իրադրության մեջ սրվում էին հակասությունները գաղութի հայ քաղաքական կուսակցությունների միջև։ Պայքարը հիմնականում ընթանում էր երկու խմբավորումների՝ հայաստանյան և հակահայաստանյան, այսինքն, Խորհրդային Հայաստանի կողմնակիցների և հակառակորդների միջև։ Հայաստանի կողմնակիցները 1936 թ. աշխատավորական լայն զանգվածների հետ միասին հիմնել էին «Միասնական ճակատ» կազմակերպությունը՝ ՍԴ հնչակյանների, ռամկավարների և հայ կոմունիստների գլխավորությամբ։ Հակախորհրդային ճակատը հիմնականում գլխավորում էր ՀՀ դաշնակցության կուսակցությունը, որը, մշտապես օգտվելով բուլղարական իշխանությունների օժանդակությունից, վարում էր բացահայտ հակակոմունիստական-հակաբոլշևիկյան քաղաքականություն և պայքարում էր «Միասնական ճակատի» դեմ։

Տվյալ ժամանակաշրջանում որոշ հայ բանվորական, ուսանող-դպրոցական խմբակներ, ծառայողներ, ազատ զբաղմունքի տեր անհատներ և արհեստավորներ գործում էին ընդհատակյա Բուլղարական բանվորական կուսակցության (ԲԲԿ) և Բանվորական երիտասարդական միության (PMC-ԲԵՄ) շարքերում[1]։ Նրանք հիմնել էին իրենց խմբակները հայաշատ քաղաքներում և գործում էին հայ լեգալ հասարակական-մշակութային միություններում, կազմակերպություններում ու թաղամասերում (ՀՕԿ, ՀՄԸՄ, Արծիվ, Շանթ, Արարատ, սկաուտա-մարզական և զբոսաշրջիկային միություններ)։ Նրանք մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկություններում կազմակերպվող միջոցառումներին, ցույցերին, գործադուլներին, գործազուրկների և չքավոր ընտանիքների համար դրամական միջոցներ հավաքելու աշխատանքներին և այլն։ Հակաֆաշիստական երիտասարդական խմբակները և կոմունիստները գործում էին նաև հայ համայնքին հուզող հարցերի լուծման ուղղությամբ, այն է՝ նանսենյան քաղաքացիություն ունեցող բանվորների աշխատանքի տեղավորման, բուլղարական քաղաքացիություն ստանալու, սպորտային և մշակութային կազմակերպությունների օրինականացման և այլ հարցեր։

Գործարաններում, հիմնարկ-ձեռնարկություններում հայ հակաֆաշիստները պայքարում էին բուլղարացիների հետ, սակայն առանձին խմբակներ գործում էին նաև քաղաքների հայկական թաղամասերում։ Ուստի անհրա-

---

1 1923 թ. Բուլղարիայում սեպտեմբերյան ապստամբության պարտությունից հետո Բուլղարական բանվորական կուսակցությունը և Բանվորական երիտասարդական միությունը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը իշխանությունների կողմից հայտարարված էին օրենքից դուրս և գործում էին ընդհատակում։

ժեշտություն էր զգացվում ունենալ հայերեն թերթ, որը դառնալու էր գրավոր քարոզչության միջոց։ 1932 թ. լույս տեսավ «Հայ բանվոր» թերթի ընդամենը մեկ համար՝ Մանուկ Կարագյոզյանի խմբագրությամբ։ Խմբագրության անդամներն էին Սարդիս Հալճյանը և Թորոս Օհանյանը[2]։ Բուլղարական իշխանությունները անհապաղ արգելեցին նրա հրատարակումը։

Բուլղարիայում 1936 թ. տապալվեց «Ռազմական լիգայի» կառավարությունը, այն փոխարինվեց Կյոսեիվանովի կառավարությամբ, որն արտաքին քաղաքականության բնագավառում շրջադարձ կատարեց դեպի ֆաշիստական Գերմանիան։ Թեև այդ կառավարությունը Խորհրդային Միության հետ հաստատել էր դիվանագիտական հարաբերություններ, սակայն 1938 թ. Բուլղարական ժողովրդական ժողովից հեռացրեց ձախակողմյան պատգամավորներին, առաջին հերթին՝ հակաֆաշիստներին և կոմունիստներին։ Այդ կառավարությունը 1937 թ. վերջին արգելեց ՀՕԿ-ի գործունեությունը բուլղարահայ համայնքում և այն լուծարելուց հետո բռնագրավեց նրա ամբողջ ունեցվածքը։

1940 թ. Պլովդիվում, Սոֆիայում, Ռուսեում, Վառնայում, Բուրգասում, Յամբոլում, Սլիվենում և այլ քաղաքներում գործում էին բազմաթիվ հակաֆաշիստական խմբակներ՝ ԲԿԿ-ի և ԲԵՄ-ի գլխավորությամբ և ղեկավարությամբ։

Այդ խմբակների անդամները մասնակցում էին պատերազմը նախաձեռնողների և ֆաշիզմի դեմ պայքարին։ Նրանք քարոզչական լայն աշխատանք էին տանում Երկրորդ համաշխարհային պատերազմի բնույթի ու ընթացքի վերաբերյալ։ Նրանք դարձան 1940 թ. Բուլղարիայում կազմակերպված, այսպես կոչված «Սոբոլևյան» ակցիայի մասնակիցը, որն ուղղված էր ընդդեմ կառավարության՝ Խորհրդային Միության հետ համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու պահանջով։

1941 թ. մարտի 1-ին, ժողովրդի կամքին հակառակ, բուլղարական կառավարությունը Բ. Ֆիլովի գլխավորությամբ Վիեննայում ստորագրեց համաձայնագիր, որով Բուլղարիան դառնում էր հիտլերականների ռազմական մեքենայի կցորդը[3]։

1941 թ. մարտի 1-ին գերմանաֆաշիստական զորքերը մտան Բուլղարիա։ Երկրի փաստական ղեկավարությունն անցավ գերմանացիների ձեռքը, որի առաջին միջոցառումներից մեկը ժողովրդի առանց այն էլ խղճուկ դեմոկրատական իրավունքների վերացումը և քաղաքական կազմակերպությունների արգելումն էր։ Բուլղար ժողովրդի, այդ թվում և հայ համայնքի հակաֆաշիստական խմբակների համար սկսվեց օտար տիրակալի և նրա կամակատարների դեմ համառ պայքարի շրջան։

Պատերազմի տարիներին, չնայած ֆաշիստական իշխանությունների բռնություններին, բուլղարահայ աշխատավորության համակրանքը խորհրդային, այդ թվում հայ ժողովրդի հերոսական պայքարի կողմն էր, քանզի Խորհրդային Միության պարտությունը հայ ժողովրդի համար կենաց և մահու հարց էր. թուրքական մեծաթիվ բանակը կանգնած էր Հայաստանի սահմանի վրա և սպասում էր ԽՍՀՄ-ի պարտությանը, որպեսզի խուժի Անդրկովկաս և իրականացնի իր հայաջինջ քաղաքականությունը։

1941 թ. վերջից Բուլղարիայում լայն ծավալ ստացավ պարտիզանական շարժումը։ Ուժեղացել և նոր թափ էր առել դեմոկրատական պայքարը գերմանական զավթիչների դեմ։ Պայքարի մեջ էին ընդգրկվել ժողովրդական լայն զանգվածները բանվորական և գյուղացիական խավերից։ ԲԿԿ, Հողագործական և «Զվենո» կուսակցությունների նախաձեռնությամբ հիմնվեց «Հայրենական ճակատի» միասնական հակաֆաշիստական կազմակերպությունը, որը

---

2 Զ. Մ. Ղասաբյան, Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության, Երևան, 1986, էջ 152—153։

3 История на БКП, М., 1960, с. 353.

երկրի բոլոր հայրենասերներին, հակաֆաշիստներին, անկախ նրանց ազգային պատկանելությունից և քաղաքական ու հասարակական դիրքորոշումից, կոչ էր անում համախմբվել «Հայրենական ճակատի» շուրջ և պայքար ծավալել ֆաշիստական իշխանությունների և օտար զավթիչների դեմ։ Հակաֆաշիստական պայքարին, ինչպես նաև խորհրդային ժողովուրդներին ու բանակին աջակցելու գործին նվիրվեցին բազմաթիվ անձնուրաց հայեր։ Պայքարելով հիտլերյան զավթիչների դեմ, նրանք հանդուգն գործողություններ էին ձեռնարկում նաև բուլղարական ֆաշիստական իշխանությունների դեմ։ Հերկիզում և ոչնչացնում էին հիտլերական զորքերի պահեստները, գնացքները և նրանց հատկացված գործարանները։ Հիտլերականների զորքերի քանակի, օդանավակայանների, ռազմական ուժերի տեղաշարժման մասին տեղեկություններ էին հավաքում և հաղորդում խորհրդային բանակի գլխավոր հրամանատարությանը։ Թշնամուն բազմիցս հաջողվում էր հայտնաբերել ու ձերբակալել խիզախ մարտիկներին, որոնց նետում էին ֆաշիստական բանտեր ու համակենտրոնացման ճամբարներ։

1941 թ. ամռանը բուլգարահայ հակաֆաշիստական պայքարի կենտրոնական ղեկավարության անդամ Դավիթ Մ. Դավիթյանը[4] շրջում էր հայաշատ քաղաքներում և հաղորդում ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում ԲԿԿ-ի և «Հայրենական ճակատի» կենտրոնական ղեկավարության կայացրած որոշումներն ու հրահանգները։ Նա Պլովդիվում անցկացրեց խորհրդակցություն՝ 40-ից ավելի հայ հակաֆաշիստների մասնակցությամբ, որոնց մեծամասնությունը Երիտասարդական հանրապետական միության անդամներ ու կոմունիստներ էին։ Խորհրդակցությունը որոշեց ուժեղացնել հակաֆաշիստական պայքարը, համախմբել բոլոր հայրենասիրական ու դեմոկրատական ուժերը, ակտիվորեն մասնակցել բուլղարական զինված դիմադրական շարժմանը։

1942 թ. Սոֆիայի ոստիկանությունը մի խումբ բուլղարացիների հետ հայտնաբերեց և ձերբակալեց Սրապ Շիրինյանին, Արմենակ Կալայճյանին և Գևորգ Զավուշյանին[5]։ Առաջինը մի խումբ կոմունիստների հետ ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվեց ցմահ բանտարկության, իսկ երկրորդը՝ երկու տարվա ազատազրկման։

1941—1942 թթ. Սոֆիայի ռմբակոծումներն պատճառով շատ հաճախ ընդհատվում էր կապը ինչպես «Հայրենական ճակատի» կենտրոնական ղեկավարության և հայ հակաֆաշիստական կենտրոնի, այնպես էլ համայնքի առանձին քաղաքներում գործող խմբերի ու կենտրոնի միջև։ Դա առավել դժվարին էր դարձնում պայքարը, որովհետև հայ հակաֆաշիստական կազմակերպությունները ամբողջությամբ ենթարկվում էին «Հայրենական ճակատի» օկրուգային, քաղաքային և շրջանային կոմիտեներին։

1942 թ. ձերբակալումներն ու համակենտրոնացման ճամբարներն ուղարկելը համատարած բնույթ էին ստացել։ Ամենափոքր կասկածանքը որևէ անձնավորության նկատմամբ առիթ էր տալիս նրան ձերբակալել ու պատժել նորաստեղծ օրենքներով և հրամաններով, ընդհուպ՝ գնդակահարությամբ։

Նույն թվականին «Ծնի քյոյ» (Կրրստոպոլե) համակենտրոնացման ճամբարում էին գտնվում հայ կոմունիստներ Արտաշես Ասլանյանը, Գաբրիել Գաբրիելովը, Դավիթ Մ. Դավիթյանը, Կարապետ Մարդարյանը, Օնիկ Մարտիկյանը, Գևորգ Թոնկուլյանը, Թորգոմ Պոյաճյանը, Գրիգոր Հովհաննիսյանը,

---

4 Պատերազմի ժամանակաշրջանում ԲԿԿ և ԲՀՄ կից գոյություն չունեին փոքրամասնությունների բաժանմունքներ։ Հակաֆաշիստական առանձին խմբակները ղեկավարվում էին տեղական կոմիտեների կողմից, սակայն Սոֆիայում գործող բուլղարահայ համայնքի հակաֆաշիստների ղեկավարությունը կատարում էր կենտրոնական կոմիտեի դեր և անմիջական կապի մեջ էր «Հայրենական ճակատի» փոքրամասնությունների բաժնի հետ։

5 Архив на министерството на вътрешните работи София ф. К-610, ае К-8393, л. 5, 7.

Կարապետ Հովսեփյանը, Ստեփան Նավասարդյանը, Օնիկ Ղուկասյանը, Խաչիկ Փիլաֆճյանը, Մանուկ Կարադյոզյանը և շատ ուրիշներ[6]։

1942 թ. Սոֆիայում ԲԿՄ-ի շարքերն է ընդունվում և ընդհատակյա հակաֆաշիստական աշխատանք է ծավալում Հերմինե Ղազդրադյանը։ Հետագայում, խուսափելով ոստիկանության հետապնդումից, նա բուլղար ընկերների հետ անցնում է Սոֆիայից ոչ հեռու Ստարա-պլանինայի Մուրդաշ լեռան լանջերում մարտնչող «Զավդար» պարտիզանական ջոկատի շարքերը, որի հրամանատարը Դոբրի Ջուրովն էր (ֆաշիստական իշխանության տապալումից հետո Բուլղարիայի պաշտպանության նախարարը)։

Հերմինեն, որի պարտիզանական անունը Սաշկա էր, որպես գնդացրային անձնակազմի ավագ մասնակցեց մի շարք մարտերի, սակայն Նեդուշովո գյուղի գրավման մարտերում ընկավ թշնամու ձեռքը։ 1944 թ. ապրիլի 10-ին ֆաշիստական ոստիկանները անասելի խոշտանգումներից հետո նրան կիսամեռ վիճակում թաղեցին իր իսկ ձեռքով փորած գերեզմանում[7]։ Բուլղար բանաստեղծ Վասիլին Անդրեևը Սաշկային անմահացրել է նրան ձոնած պոեմով[8]։

1943 թ. Ստալինգրադի ճակատամարտի հաղթական ավարտից հետո Բուլղարիայում, ինչպես ամբողջ Եվրոպայում դեմոկրատական շարժումն էլ ավելի ուժեղացավ։ 1943 թ. ապրիլին «Հայրենական ճակատի» գլխավոր շտաբը մշակեց ռազմաօպերատիվ պլան, որի համաձայն Բուլղարիայի ամբողջ տարածքը բաժանվեց 12 ապստամբական օպերատիվ ռազմական գոտիների (Въстаническа оперативна зона), որոնք ընդգրկում էին «Հայրենական ճակատի» մեկ կամ ավելի օկրուգային կոմիտեներ, օպերատիվ գոտիներում գործում էին 65 պարտիզանական միավորներ՝ 200-ից ավելի յատակներով[9]։ Այդ գոտիներն ունեին իրենց ռազմական ղեկավար շտաբները։ Նրանք բաղկացած էին «Հայրենական ճակատի» կազմում գործող կուսակցությունների ներկայացուցիչներից և ղեկավարվում էին կենտրոնական կոմիտեի հրահանգներով։

Կարճ ժամանակամիջոցում ապստամբական խմբերն ու բրիգադները տիրապետեցին պարտիզանական պատերազմ մղելու արվեստին։ Բոլոր պարտիզանական ջոկատներն ու միավորումները կազմեցին, այսպես կոչված, ՆՕՎԱ-ն (Народно освободителна въстаническа армия)։ «Հայրենական կատի» ազգային կոմիտեն հսկայական աշխատանք ծավալեց բուլղարական ֆաշիստական բանակից հայրենասեր հրամանատարական կադրերին ՆՕՎԱ-ի շարքերը ներգրավելու ուղղությամբ։ Առանձին վայրերում պարտիզանական ջոկատները գլխավորում էին ԽՍՀՄ-ում ռազմական կրթություն ստացած բուլղարները[10]։

Բուլղարիայի հայաշատ քաղաքներից Սոֆիան գտնվում էր առաջին օպերատիվ գոտում, Պլովդիվը՝ երկրորդ, Յամբոլը, Սլիվենը, Այտոսը, Բուրգասը՝ վեցերորդում, Վառնան՝ տասներորդ, իսկ Ռուսեն «Հայրենական ճակատի» ազգային կոմիտեն նախատեսում էր դարձնել տասներեքերորդ գոտի, սակայն նվազ ռազմական ուժերը հնարավորություն չտվեցին այն իրակա-

---

6 Централен Държавен Исторически Архив (այսուհետև՝ ЦДИА), София. ф. 370, оп. 3, ае. 93, л. 84, ф. 284. оп. 1, ае. 7727. л. 1, ае. 7728, л. 12, 34.

7 Добри и Елена Джурови, «Мургаш», Воспоминания, М., 1974, с. 291.

8 Պոեմի հայերեն թարգմանությունը՝ Գեորգ Էմինի (տե՛ս Երևան, Սոֆիա, 9. IX. 1976)։

9 Յատակ էին կոչվում այն անձնավորությունները, որոնք բոլոր միջոցներով օգնում էին պարտիզանական շարժմանը (բնակարան, սնունդ, հագուստ մատակարարելով)։ Այս մասին տե՛ս История на антифашистката борба в България, 1939/1944, т. 2, София, 1976, с. 37, Георги Георгиев. НОВА, бойната дейност на Народно-освободителната въстаническа армия, 1943—1944 гг., София 1974, с. 19.

10 История на БКП. М., 1960, с. 361.

նացնել։ Առանձին հայ հակաֆաշիստներ, կոմունիստներ ու ռեմսիստներ գործում էին նաև Հասկովոյում, Շումենում, Պազարջիկում, Սիլիստրայի գոտիներում։

1942 թ. նոյեմբերին Պլովդիվի ոստիկանությանը հաջողվեց հայտնաբերել ու ձերբակալել բազմաթիվ հակաֆաշիստական խմբակների, որոնք անձնուրաց կատարում էին «Հայրենական ճակատի» բոլոր հանձնարարությունները, ներդնելով իրենց ուժն ու եռանդը ֆաշիզմի դեմ ծավալվող համաժողովրդական պայքարում։

Պլովդիվի ռազմադաշտային դատարանը քաղաքի երկրորդ շրջանում գործող 28 երիտասարդ հակաֆաշիստ ռեմսիստների դատապարտեց զանազան ժամկետների բանտարկության, որոնց շարքում էին Զոհրաբ Ղասարյանը՝ հայկական խմբի քարտուղար, Ստեփան Թանդրյանը, Երամ Թադվորյանը, Նուպար Սարգիսյանը և Մինաս Պետրոսյանը։ Վերջին երեքին դատարանը ազատ արձակեց։

1943 թ. ապրիլին Կոստանդին Բելչևի, Դիմիտր Գարչևի, Դիմիտր Զակալովի, Ցվյատկո Գագովի, Հրիստո Սերկեչիևի, Մուդոլֆ Լևիի և ուրիշների հետ Զոհրաբ Ղասարյանն ու Ստեփան Թանդրյանը (առաջինը դատապարտվել էր 15 տարվա բանտարկության, իսկ երկրորդը՝ 10) Պլովդիվի բանտից տեղափոխվեցին այդ տարիներին Բուլղարիային միացված Մակեդոնիայի (Հարավսլավիա) Սկոպիե քաղաքի մոտ գտնվող «Իդրիզովո» բանտ[11]։

1944 թ. օգոստոսին հարավսլավական պարտիզանները, հարձակում գործելով բանտի վրա, ազատեցին բոլոր բանտարկյալներին (մոտավորապես 460 հոգի՝ մեծ մասը մակեդոնացիներ, սերբեր, չերնոգորցիներ)։ Նույն թվականի օգոստոսի 27-ին III մակեդոնական երիտասարդական պարտիզանական բրիգադին կից, ազատագրված 130 բանտարկյալներից կազմակերպվեց բուլղարական «Վասիլ Կոլարով» պարտիզանական ջոկատը։ Ջոկատը գեներալ Իլյիչի ընդհանուր հրամանատարությամբ III, Մակեդոնական և VIII Պրեշովյան բրիգադների հետ մասնակցեց Ռայկո Ջենզիֆով, Դրաչևո, Սվետի Նիկոլա, Նեմանիցա և Մակեդոնիայի այլ բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերին։ 1944 թ. սեպտեմբերի 16-ին ջոկատը, շտաբի գլխավորությամբ բուլղարական սահմանի վրա կտրելով գերմանական ռազմադիրքերը, հարավսլավա-բուլղարական սահմանով մտավ Բուլղարիա[12]։ Բուլղարական ժողովրդական իշխանության զորակոչով ջոկատի մարտիկների մեծ մասը I բանակի կազմում մեկնեց սովետա-գերմանական ռազմաճակատ։ Այդ բանակը, 1944 թ. սեպտեմբերի 9-ից հետո, երբ խորհրդային բանակը մարտեր էր մղում Բալկաններում, գեներալ Ստոյչևի և մարշալ Տոլբուխինի ընդհանուր հրամանատարությամբ կռվում էր Ուկրաինական III ռազմաճակատի ձախ թևում՝ Հարավսլավիայի, Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման համար։

Մինչ խորհրդային բանակը մարտեր էր մղում Մոլդավիայի և Ռումինիայի տարածքում, Պլովդիվ քաղաքում ծանր, ընդհատակյա պայմաններում հակաֆաշիստական Դիմադրական շարժման մեջ էին ընդգրկվել բազմաթիվ հայ երիտասարդներ, որոնք շարժմանը մատակարարում էին զենք, պարեն և դրամական միջոցներ։ Հայկական հակաֆաշիստական խմբակները ղեկավարում էին Տիրան Բարիկյանը, Կարո Ճինգոզյանը, Էդի Կարապետյանը, Հրանտ Նազարեթյանը։ Խմբակներում գործում էին Կարո Ֆերենկյանը, Գասպար Գասպարյանը, Կարո Ուստայանը, Գևորգ Բարսեղյանը, Ժիրայր Հակոբյանը, Երամ Փաշոյանը և ուրիշներ։ Պլովդիվի «Արծիվ» տուրիստական միության շարքերում գործում էին առանձին հակաֆաշիստական խմբակներ՝ Արա Մարուք-

---

[11] Пловдивски окръжен исторически архив МВР, наказателно дело № 73, 1943 г.

[12] В. Л. Зарков. Записки на политзатворника. София, 1959, с. 92. Илия Бочев. Революционния процес в България 1940—1944 гг., София, 1961, с. 147, Զ. Մ. Ղասարյան, նշվ. աշխ., Երևան, 1986, էջ 166։

յանի ղեկավարությամբ։ Աչքի էին ընկնում հատկապես Սմբատ Պալյանը, Նուպար Աղտայանը, Վարդան Եմիշյանը, Մելինե Մարուքյանը, Օննիկ Մարուքյանը։ Պլովդիվի տարբեր շրջանների հիմնարկ-ձեռնարկություններում գործում էին կոմունիստ-հակաֆաշիստներ Անտուան Դյուլգերյանը, Արթին Լուսինյանը, Սարդիս Այանյանը։ Աղավնի Բաշմաքյանը և Վարդգես Ռուբենյանը ներգրավված էին հակաֆաշիստական մամուլի, կոչերի և թռուցիկների տպագրական սարքավորումների մատակարարման և կազմակերպման աշխատանքներում։ Արա Մարուքյանը, Սարդիս Այանյանը և Սմբատ Պալյանը Երվանդ Ադամյանի զրենական պիտույքների վաճառատնից կեղծ փաստաթղթերով ձեռք էին բերում մեծ քանակությամբ թուղթ, գրենական պիտույքներ և ապակետիպ տպագրական մեքենա ու շրջանի ղեկավար Գերմանի Գերմանովի միջոցով հանձնում Դիմադրական շարժման ղեկավարությանը։ Տպագրական գործը Պլովդիվում կազմակերպվում էր Կարապետ Մարուքյանի տանը[13]։

1944 թ. Սոֆիայի ռմբակոծումների պատճառով ԲԿԿ կենտկոմի և «Հայրենական ճակատի» ազգային կոմիտեի բազմաթիվ անդամներ տեղափոխվել էին Պլովդիվ և ապաստանել մի քանի թաքստոց-բնակարաններում։ Ցոլա Դրազոյչեան, Անտոն Յուգովը, Լիլյանա Դիմիտրովան, Ալեքսանդր Դիմիտրովը, Ադալբերտ Անառնովը և ուրիշներ որոշ ժամանակ թաքնվել են Արա Մարուքյանի և Աղավնի Բաշմաքյանի բնակարաններում[14]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին բուլղարական ֆաշիստական կառավարությունը ճանապարհաշինական և ռազմական օբյեկտների կառուցման համար պարտադիր կարգով պարբերաբար օգտագործում էր «Նանսենյան քաղաքացիություն» ունեցող հայ երիտասարդների աշխատանքը։ Զորակոչված հայ հակաֆաշիստներ Տիգրան Փեշտիմալճյանը, Գևորգ Բարսեղյանը, Հարություն Ներսեսյանը, արձագանքելով «Հայրենական ճակատի» ազգային կոմիտեի՝ «Համալրել պարտիզանական ջոկատները» կոչին, փախուստ տալով պարտադիր աշխատանքներից, մտան Սրեդնա գորա լեռան լանջերում գործող «Հրիստո Բոտև» պարտիզանական ջոկատի շարքերը[15]։

1944 թ. հունիսին Պլովդիվի ոստիկանությանը հաջողվում է հայտնաբերել հայ հակաֆաշիստներին և ձերբակալել մի քանի խմբակներ։ Մոտավորապես 25 հակաֆաշիստներ, այդ թվում Արա Մարուքյանը. Աղավնի Բաշմաքյանը, Էդի Կարապետյանը, Կարո Ճինգոզյանը, Հրանտ Նաղարեթյանը, Անտուան Դյուլգերյանը, Սարդիս Այանյանը, Տիրան Բարիկյանը և ուրիշներ Պլովդիվի ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվեցին տարբեր ժամկետներով ազատազրկման։

ՆՕՎԱ-ի VI գոտու մեջ էին Յամբոլ, Սլիվեն, Այտոս, Բուրգաս հայաշատ քաղաքները։ Այս գոտու պարտիզանական ջոկատները և Դիմադրական շարժման մասնակիցները հիմնականում գործում էին Բալկանյան լեռնաշղթայի արևելյան մասում՝ Սլիվենի և Կոտելի լեռնալանջերում ու Սև ծովի ափերին։ 1942 թ. Բուրգասի «Հայրենական ճակատի» ազգային և օկրուգային կոմիտեները VI գոտու շտաբիս հրահանգ են ստանում պարտիզանական ջոկատներ հիմնել Պոմորիեի, Այտոսի և Ստրանջա լեռան շրջաններում։ Ընդհատակյա ծանր պայմաններում այդ աշխատանքներին են լծվում Լյուբեն Նիկոլովը և Օհան Բոստանճյանը։ Վերջինիս հանձնարարվում է աշխատել Սարաֆովայի օդանավակայանում տեղավորված գերմանական շտաբում։ Օ. Բոստանճյանը, տիրապետելով գերմաներենին, կարողանում է շահել Սև ծովի ափերին ռազմաշինարարական աշխատանքները ղեկավարող գերմանացի ին-

---

13 Կարապետ Մարուքյանը Արա և Օննիկ Մարուքյանների հայրն էր, որ որդիների ցանկությամբ սեփական տունը վերածել էր նաև թաքստոց-բնակարանի՝ ֆաշիստական իշխանությունների կողմից հալածված և ընդհատակում գործող հակաֆաշիստների համար։

14 Զ. Մ. Ղ ա ս ա բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 167։

15 Коммунист, 27. XI. 1965.

ժեներ Կունցեի վստահությունը և պարբերաբար տեղեկություններ հաղորդել հիտլերականների խիստ գաղտնի փաստաթղթերի ու Բուլղարիայի մերձափնյա շրջաններում տեղաբաշխված գերմանական ռազմական ուժերի տեղաշարժերի մասին[16]։ Նա պատճենահանել էր ռազմական կարևոր օբյեկտների գծագրերը, որոշել էր Սև ծովի ափում ՆՕՎԱ-ի կամ խորհրդային բանակի զորամասերի դեսանտ իջեցնելու հարմար վայրերը[17]։ Այդ բոլոր նյութերը Բուրգասի «Հայրենական ճակատի» օկրուգային կոմիտեի քարտուղար, կոմունիստ Ալեքսանդր Օբրետենովի միջոցով հանձնվում է խորհրդային բանակի գլխավոր շտաբին։ Օ. Բոստանճյանը նաև ապաստան էր տալիս ոստիկանության կողմից հետապնդվող հակաֆաշիստներին։

Բուրգասում Ֆրանց Կալաճյանը և Հովհաննես Բակլավաճյանը եռանդուն մասնակցություն ցուցաբերեցին դիմադրական շարժման կազմակերպման և ընդլայնման գործին։ Հ. Բակլավաճյանը «Հայրենական ճակատի» կոմիտեների ստեղծման ուղղությամբ բեղմնավոր աշխատանք ծավալեց Բուրգասի գիմնազիաների աշակերտության և ուսուցիչների շրջանում։ Նույնպիսի աշխատանքի էր լծված Բուրգասից ոչ հեռու Մոզոպոլ քաղաքում Երիտասարդական բանվորական միության քաղաքային կոմիտեի քարտուղար Խաչիկ Փիլաֆճյանը։ Նա բազմիցս աքսորվել է Բուլղարիայի ֆաշիստական իշխանությունների կողմից։

1942 թ. Բուրգասի հակաֆաշիստական-դիմադրական շարժման գործիչներից էր Մերի Գրիգորյանը։ Նա «Հայրենական ճակատի» Բուրգասի օկրուգային կոմիտեի քարտուղար Դիմիտր Պոպովի առաջարկով իր բնակարանը տրամադրել էր դիմադրական շարժման հետապնդվող մասնակիցներին։

ՆՕՎԱ-ի VI գոտու շտաբը գտնվում էր Ցամբոլ քաղաքում։ Շտաբի անդամ Պանայոտ Կարակաչանովի (ծածկանունը՝ Կարապետ) հանձնարարությամբ Հովհաննես և Հարություն Ալեքսանյանները իրենց սեփական տունը տրամադրում են ՆՕՎԱ-ի շտաբին, այն վերածելով թաքստոց-ապաստարանի։ Այստեղ կազմակերպվում է «Հայրենական ճակատի» օկրուգային կոմիտեի տպագրական գործը, պահվում է զենք ու պարեն։ Նույն բնակարանում ռադիոն հանդիպում են Դիմադրական շարժման ղեկավարները։ Հովհաննես Ալեքսանյանը իրականացնում էր Ցամբոլի և Սլիվենի կապը, փոխադրում Դիմադրական շարժման հրատարակվող մամուլը, կոչերը, պարեն և ռազմամթերք[18]։ Ցամբոլի բուլղարական գիմնազիայի աշակերտական շրջաններում ակտիվ աշխատանք էր կատարում Նևրիկ Բանիկյանը՝ պրոպագանդելով Դիմադրական շարժման ծրագիրն ու նպատակները։ 1942 թ. Ցամբոլի ոստիկանության կողմից ձերբակալվեցին հակաֆաշիստական պայքարի մի խումբ անդամներ, այդ թվում և Մելքոն Ինջեյանը։ Ռազմադաշտային դատարանը նրան դատապարտեց 10 տարվա ազատազրկման։

Սլիվեն քաղաքում Երիտասարդական բանվորական միության անդամ Գեորգ Փափազյանը զենք ու պարեն էր տեղափոխում պարտիզանների համար։ Զենք տեղափոխելու ժամանակ ձերբակալվում է ոստիկանության կողմից։ Ռազմադաշտային դատարանը մահապատիժը փոխարինում է 15 տարվա ազատազրկմամբ։ Այս քաղաքում Դիմադրական պայքարի գործիչներից էին Աղնիվ Խուլյանը, Կարպիս Կյուրեղյանը, Աննիկ Փափազյանը, Գրիգոր և Սերբուհի Դավիթյանները։ Տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում Դիմադրական շարժմանը նյութական և այլ միջոցներով օժանդակել են Պետրոս Պատվականյանը, Ահարոն Խուլյանը, Հովակիմ Պաթմագյանը, Սիմոն Ջանչյանը և ուրիշներ։ Աղնիվ Խուլյանը իր բնակարանը տրամադրել էր հետապնդվող մարտիկներին։ Նրա բնակարանում հաճախ ապաստանել են Դիմադրական

---

16 Черноморски фронт, Бургас, 15. VIII. 1968.

17 50 години борба против капитализма и фашизма (1899—1944), София. 1964, с. 290.

18 Զ. Մ. Ղասարյան, նշվ. աշխ., էջ 169։

շարժմանը մասնակցելու համար Խորհրդային Միությունից եկած զինծառայողներ, այլ անձինք։ Ազնիվ Խուլյանը բազմիցս ձերբակալվել է և խոշտանգումների ենթարկվել բուլգարական ոստիկանության եղողմից։

Այտոս քաղաքում էր գործում կոմունիստ, դիմադրական պայքարի կազմակերպիչ Վարդգես Սիրանոսյանը։ 1942 թ. Այտոսի և Սլիվենի շրջաններում նա կազմակերպում է «Հայրենական ճակատ» կոմիտեներ։ Վ. Սիրանոսյանը մեծ հարգանք էր վայելում ազգաբնակչության միջավայրում։ Ընդհատակյա դժվարին պայմաններում նա բազմիցս ապահովել է ոստիկանության կողմից հետապնդվող «Հայրենական ճակատի» գործիչների գաղտնի անցումը Խորհրդային Միություն։ Նրա հոր տունը «Բյուլբյուլդերե» վայրում եղել է թաքստոց հետապնդվող մարտիկների համար։ Այնտեղ անցկացվել են Դիմադրական շարժման ղեկավար ընկերների ժողովներ և հանդիպումներ։ Վ. Սիրանոսյանը Աթանաս Մանչևի և Միհայիլ Դոնչևի հետ գյուղերում հիմնել է պարտիզանական շարժմանն աջակցող կազմակերպություններ։ Ոստիկանությունը բացահայտում է նրա գործունեությունը, ձերբակալում և խոշտանգումների է ենթարկում։

ՆՕՎԱ-ի X գոտում էր Վառնա հայաշատ քաղաքը՝ Սև ծովի ափին։ 1941—1944 թթ. այստեղ գործում էին բազմաթիվ հայ կոմունիստներ՝ ԲԿԿ շարքերում, շրջանային և օկրուգային կոմիտեներում, ինչպես՝ Կարապետ Խաչատրյանը, Հարություն Պողոսյանը, Թադևոս Բամբուկչյանը, Օննիկ Մարտիկյանը, Թորգոմ Բոյաջյանը, Ժիրայր Սիմոնյանը, Տիրան Քանոնյանը, Լևոն Սողիկյանը, Կրոն Գավաֆյանը և ուրիշներ։

Վառնայի մի խումբ հայ կոմունիստների ԲԿԿ օկրուգային կոմիտեն խնդիր էր առաջադրել Սև ծովի ափերին գտնվող հիտլերյան նավատորմի, օդանավակայանների և ռազմական ուժերի տեղաշարժերի մասին ստույգ տեղեկություններ հավաքել։ Այդ ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին Տիրան Քանոնյանը, Կարապետ Խաչատրյանը, Թորգոմ Բոյաջյանը, Ժիրայր Սիմոնյանը, Լևոն Սողիկյանը, խմբակի ղեկավար Յորդան Դիլևը։ 1943 թ. Տիրան Քանոնյանը ձերբակալվում է, սակայն խմբակը շարունակում է պայքարը հիտլերականների դեմ։

Թորգոմ Բոյաջյանը սեփական լուսանկարչատունը և իր բնակարանը վերածում է հակաֆաշիստական մամուլի և զանազան կոչերի ու թռուցիկների տպագրման արհեստանոցի։

1944 թ. Վառնայի ոստիկանությանը հաջողվում է ձերբակալել «Հայրենական ճակատի» օկրուգային կոմիտեի անդամներ Ստանկո Ստոյանովին, Յանկո Կոստովին, Ծարայամբի Դոնչևին, Յանկո Կարաղյավուրովին։ Նրանց հետ ձերբակալվում են Հարություն Պողոսյանը, Կարապետ Խաչատրյանը և Հակոբ Պարոնյանը։ Ձերբակալվածները ջրահեղձ տրվեցին Սև ծովում[19]։

Նույն տարում մի խումբ բուլղար ընկերների հետ ձերբակալվում է Երիտասարդական բանվորական միության անդամ Գասպար Էքսերճյանը և ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվում է տասը տարվա բանտարկության։ Մի խումբ բուլղար կոմունիստների հետ աղատագրվում է Սարգիս Գաբրիելյանը։ Վառնայից ոչ հեռու Դոբեն Ջիֆլիկ գյուղում ընդհատակյա հակաֆաշիստական Երիտասարդական բանվորական միության շարքերում 1938 թ. սկսած գործում էր Հակոբ Պողոսյանը։ Նա 1940 թ. մտնում է ԲԿԿ շարքերը։ 1941—1943 թթ. ծառայում է բուլգարական բանակում և Մակեդոնիայի Պրիլեպ քաղաքի զորանոցում մարդազում է հակաֆաշիստական-կոմունիստական գաղափարներ։ Զորանոցի հրամանատարությունը բացահայտում է նրա գործունեությունը, ձերբակալում, խոշտանգումների ենթարկում և ծանր վիրավոր վիճակում նրան ուղարկում Բիտոլյայի հիվանդանոցը, որտեղ և մահանում է 1944 թ. օգոստոսի 9-ին[20]։

---

19 Коммунист, 3. XI. 1969.

20 Երևան, Սոֆիա, 4. IX. 1979։

Ռուսե քաղաքի հայ կոմունիստներ և Երիտասարդական բանվորական միության անդամներ Տիրան Փափազյանը, Հակոբ և Կարո Մարգարյանները, Հայկ Բուկուճյանը, Տիրուհի Փափազյանը, Պետրոս Շամլյանը, Վարդգես Դյուլգերյանը, Հակոբ Սեմերճյանը և ուրիշներ Ռուսեի «Հայրենական ճակատի» մի խումբ ընկերների հետ կազմակերպում են մարտական ջոկատներ ու պարտիզանական միավորներ։ Այդ ջոկատներն ու առանձին խմբերը տարբեր ժամանակահատվածներում գլխավորում են Նիկոլա Պոպովը, Աննա Վենտուրան, Զդրավկո Ջամպովը, Տիրան Փափազյանը, Հակոբ Մարգարյանը, որոնք զգալի աշխատանք են կատարում պարտիզանական շարժման ընդլայնման համար։ Նրանց օգնում և ապաստան են տալիս Դիմադրական շարժման նվիրված հայրենասեր հակաֆաշիստներ Միսաք Վարդանյանը, Մարիա Թորոսյանը, Տիգրանուհի Պարոնյանը, Մարա Վարդանյանը, Սարգիս Պանտրմալանյանը, Ռուբեն Վարդանյանք և ուրիշներ[21]։

Հակոբ Մարգարյանի գլխավորած «Հոդանսկա» պարտիզանական ջոկատի մարտերից մեկում սպանվում են բազմաթիվ պարտիզաններ, իսկ ջոկատի հրամանատարը ընկնում է շրջապատման մեջ և ձերբակալվում։ «Ջերվենսկա» և «Հոդանսկա» ջոկատների ձերբակալված պարտիզանները ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվում են տարբեր ժամկետներով բանտարկության, իսկ Տիրան Փափազյանը և Հակոբ Մարգարյանը՝ ցմահ բանտարկության։

Ռուսեի բուլղար և հայ աշխատավորությունը 1944 թ. սեպտեմբերի 9-ին առաջինը դիմավորեց և ողջունեց Բուլղարիա մուտք գործած խորհրդային բանակի առաջապահ զորամասերին։ Նրանց շարքերում մարտնչող հայորդի ռազմիկները ջերմորեն հյուրընկալվեցին հայ հասարակայնության կողմից։

Գերմանական օկուպանտների և տեղական ֆաշիզմի դեմ ուղղված բուլղար ժողովրդի Դիմադրական շարժմանը մասնակցեցին նաև առանձին հայ հակաֆաշիստ-կոմունիստներ։ Նրանք իրենց հանդուգն և խիզախ գործունեության համար ենթարկվեցին դաժան խոշտանգումների ու բանտարկության, տարբեր ժամկետներով։ Այդպիսիններից էին Գրիգոր, Խաչեկ և Օննիկ Օհանյանները՝ Սվիլենգրադում, Հակոբ Մերկերյանը՝ Ստարա Զագորայում, Օննիկ Ղուկասյանը՝ Իսպերիհում, Թադևոս Օվանեզովը՝ Պլովդիվում, Գրիգոր Սինանյանը, Թորոս Օհանյանը՝ Պազարջիկում և ուրիշներ[22]։

Այսպիսով, բուլղարահայ հակաֆաշիստ հայրենասերները իրենց լուման ներդրեցին եվրոպական և համաշխարհային հակաֆաշիստական-դիմադրական պայքարի պատմության էջերում՝ տալով անձնուրաց հերոսներ։

1944 թ. սեպտեմբերի 9-ին Բուլղարիայում հաստատված «Հայրենական ճակատի» կառավարությունը որոշեց մասնակցել նաև պատերազմի վերջին՝ ֆաշիստական Գերմանիայի ջախջախման փուլին։ Բուլղար ժողովրդի մասնակցությունը պատերազմին գերմանական զավթիչների և ֆաշիզմի դեմ 1941 թ. սկսված Դիմադրական շարժման շարունակությունն էր։

1944 թ. հոկտեմբերի 28-ին Բուլղարիայի, Խորհրդային Միության, Անգլիայի և Միացյալ Նահանգների միջև կնքվեց զինադադար։ Խորհրդային Միության օգնությամբ Բուլղարիան կարողացավ պահպանել իր տարածքային ամբողջականությունը։ Բուլղարական կառավարությունը պատերազմ հայտարարեց ֆաշիստական Գերմանիային[23]։ Ազատագրված Բուլղարիան դարձավ Հայրենական պատերազմի մասնակիցը։

---

21 Նույն տեղում, 2. IX., 6. X. 1979։

22 ЦДИА, ф. 284, оп. 1, ас. 8602, л. 2. Տե՛ս նաև Страници за героите, Очерки за загиналите революционни борци от Стара-загорски окръг, София, 1969. с. 490.

23 Ջ. Մ. Ղասարյան, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978, էջ 72։

Հայտարարվեց ընդհանուր զորակոչ։ Բուլղարական I բանակի շարքեր զորակոչվեցին 25—45 տարեկան քաղաքացիներ, այդ թվում նաև բուլղարական քաղաքացիություն ստացած բազմաթիվ հայեր։

Բազմաթիվ պարտիզանական ջոկատներ և Դիմադրական շարժման մասնակիցներ բուլղարական բանակի շարքերում մեկնեցին ռազմաճակատ։ Նրանցից շատերը նորաստեղծ բուլղարական բանակում նշանակվեցին քաղաքական կոմիսարներ։ Բանտերից և համակենտրոնացման ճամբարներից ազատված բազմաթիվ քաղբանտարկյալներ, արձագանքելով «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» «Հայրենական ճակատի» ազգային կոմիտեի կոչին, I բուլղարական բանակի զորաբաժիններում, III Ուկրաինական ճակատում գեներալ Ստոյչևի և մարշալ Տոլբուխինի անմիջական հրամանատարությամբ մասնակցեցին Հարավսլավիայի, Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման համար մղվող մարտերին։

Բուլղարահայերը ևս «Հայրենական ճակատի» ազգային կոմիտեի և դրա հայկական բաժանմունքի բոլոր ձեռնարկումների մասնակիցը դարձան։ Նրանք թե՛ զորակոչված դնդերում ու վաշտերում, թե՛ կամավորական վաշտերում աչքի ընկան Հարավսլավիայի ազատագրման համար Ստրացինում, Կրիվապալանկայում, Պչինյայում, Կումանովոյում և Սկոպլեում մղված մարտերում։ Հերոսի մահով ընկան Հովհաննես Գալփաքճյանը, Սարդիս Հովհաննիսյանը, Կարո Սեմերճյանը, Ռուբեն Ռուբենյանը և ուրիշներ։

1944 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Սկոպլեի գրավումով բուլղարական բանակի համար ավարտվեց պատերազմի առաջին փուլը։

1945 թ. հունվարին «Հայրենական ճակատի» բուլղարական կառավարությունը ընդհանուր զորակոչ հայտարարեց, համալրեց առաջին բանակի շարքերը, որը շարունակեց ֆաշիզմի վերջնական ջախջախման իր մարտական ուղին։ Նորից զորակոչվեցին բազմաթիվ հայ երիտասարդներ։ Նրանցից շատերը բալկանյան-դրավյան դիվիզիայի կազմում Դրավոսոբլիչի և Դրավոպակոնիայի շրջաններում հերոսաբար մարտնչեցին հիտլերականների դեմ։

Իրենց ցուցաբերած խիզախության համար շատերը պարգևատրվեցին խորհրդային և բուլգարական շքանշաններով ու կրծքանշաններով։

1945 թ. ապրիլի 25-ին Սոֆիայի զինվորական հիվանդանոցում բուժվող մի խումբ հայ զինվորներ նամակ են ուղարկում տեղի «Երևան» հայերեն թերթի խմբագրությանը, որտեղ գրված էր. «Մենք, կռվելով մեր երկրորդ հայրենիքի՝ Պուլկարիայի համար, կռված եղանք նաև մեր սիրելի Խորհրդային Հայաստանի համար։ Նմանապես բոլոր ազատամիտ մարդկության նպատակը իրականացնելու համար, որը ամեն ջանք կը թափե օր առաջ ոչնչացնելու համար այն դաղանը, գերմանական շովինիզմը, որը 6—7 տարիներ ի վեր մարդկության արյունը կը ծծե։ Անկցի՛ ֆաշիզմը։ Կեցցե՛ ազատամիտ մարդկությունը»[24]։

Զորակոչված բուլղարահայերը բուլղարական բանակի տարբեր զորամասերում, III Ուկրաինական ռազմաճակատում (մոտավորապես 800 հայորդիներ) արիաբար մարտնչեցին՝ իրենց ավանդը ներդնելով բուլգար ժողովրդի Հայրենական պատերազմի հաղթանակի գործում։

Այսպիսով, թե՛ բուլգարական հակաֆաշիստական-գիմադրական շարժմանը մասնակցող և թե՛ բուլղարական բանակներում մարտնչող 1000-ից ավելի բուլղարահայեր պատվով կատարեցին իրենց պարտքը եղբայրական բուլղար ժողովրդի հանդեպ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամա-

---

24 Երևան, 25. IV. 1945։ Ստորագրողը և նամակ ուղարկողը Հակոբ Քուրդյանն է (Հովսեփ Զուվանճյան), որը 1934 թ. հակաֆաշիստական գործունեության համար, խուսափելով ոստիկանության հետապնդումից, անցել էր Ռումինիա։ 1940 թ., երբ Հարավային Դոբրուջան միացվեց Բուլղարիային, նա վերականգնեց իր բուլղարական քաղաքացիությունը՝ անունով և զորակոչվեց բուլղարական բանակ։ Նա մասնակցել է Հայրենական պատերազմին։ Շքանշանով պարգևատրվել է Խորհրդային Միության պաշտպանության նախարարության կողմից։

նակ։ Այդ հերոսները իրենց արյունով սրբագործեցին հայ-բուլղարական դարավոր բարեկամությունը բռնությունների և օտար լծի դեմ մղվող պայքարում։

УЧАСТИЕ БОЛГАРСКИХ АРМЯН В ДВИЖЕНИИ СОПРОТИВЛЕНИЯ БОЛГАРСКОГО НАРОДА И В ВОЙНЕ ПРОТИВ ФАШИСТСКОЙ ГЕРМАНИИ (1939—1945 гг.)

З. М. КАСАБЯН

Резюме

Болгарские армяне принимали деятельное участие в движении Сопротивления болгарского народа. В антифашистской борьбе и в деле содействия Советской Армии приняли участие свыше 1000 болгарских армян—как в отдельных антифашистских организациях, так и в партизанском движении.

Армяне, вовлеченные в движение Сопротивления, не только принимали участие в организации и укомплектовании партизанских отрядов, но и разделяли все тяготы отечественного фронта, содействуя в доставке оружия, продовольствия и в оказании помощи болгарскому народу—в Софии, Пловдиве, Ямболе, Слизне, Айтосе, Бургасе, Варне, Русе, Хасково, Шумле и т. д.

Многие болгарские армяне пролили кровь в боях за освобождение Югославии, Венгрии, Австрии.